ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 2

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԽԹԱՆՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ 2

Արտահանման վրա հիմնված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության ներքո նախատեսված ծրագրերի իրականացում..... 2

«Զբոսաշրջությանն աջակցության ծառայություններ» 2014 թվականի ծրագրի իրականացում. 3

«Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայություններ» 2014 թվականի ծրագրի իրականացման շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները. 4

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽԹԱՆՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՍՏԱՎՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ 6

Արտահանման արդյունավետ շուկաներ մուտքի հնարավորությունների ընդլայնում. 6

Արտահանմանն աջակցող ինստիուցիոնալ դաշտի կատարելագործում..... 7

ԵԱՏՄ-ի շրջանակներում իրավական կարգավորումների և պայմանների վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտներին խորհրդատվական և տեղեկատվական աջակցություն. 8

ԳՈՐԾԱՐԱՐ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՎ ՓՄՁ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ 8

Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների 2014թ ծրագրի իրագործման շրջանակներում նախարարության կողմից համակարգվել են հետևյալ աշխատանքները. 8

Տեսչական բարեփոխումների իրականացում 10

Ներդրումների ներգրավման հնարավորությունների ընդլայնում.....10

ՓՄՁ պետական աջակցության 2014 թվականի ծրագրի իրականացում 11

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ 11

Քաղաքացիական ավիացիայի ոլորտում ինստիտուցիոնալ նոր կարգավորման ամրագրում.....11

Քաղաքացիական ավիացիայի բնագավառում միջազգային իրավապայմանագրային հարաբերությունների վերանայում 12

ԻՆՈՎԱՑԻՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽԹԱՆՈՒՄ 13

Հայաստանում ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության հայեցակարգով նախատեսված համակարգաստեղծ նախաձեռնությունների իրականացմանն աջակցություն. 13

Ինովացիոն ոլորտում միջազգային համագործակցության ակտիվացմանն աջակցություն 14

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ կառավարության 2014թ. հունվարի 9-ի թիվ 10-Ն և հուլիսի 31-ի թիվ 777-Ն որոշումներով ամրագրված՝ հաշվետու տարվա համար Նախարարության գործունեության առաջնահերթությունների օրակարգը ներառել է համապատասխանաբար երեք և հինգ գերակա խնդիր, որոնց իրագործման ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքների հաշվետվությունը ներկայացվում է ստորև:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԽԹԱՆՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Արտահանման վրա հիմնված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության ներքո նախատեսված ծրագրերի իրականացում.

Իրականացվում են ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության շրջանակներում հաստատված 8 ոլորտային ռազմավարությունների (կոնյակագործություն, գինեգործություն, ճշգրիտ ճարտարագիտություն, դեղագործություն ու բիոտեխնոլոգիաներ, ոսկեգործություն, ադամանդագործություն, ժամագործություն և թեթև արդյունաբերություն) գործողությունների ծրագրերով նախատեսված աշխատանքները:

2014**թ. պետական աջակցության ծրագրով իրականացվել են հետևյալ աշխատանքները**.

- արտադրական գործունեության վարկավորման գործիքով բավարարվել է 20 ընկերության հայտ,
- միջազգային սերտիֆիկացման համաֆինանսավորում գործիքով բավարարվել է 6 ընկերության 11 հայտ,
- ապահովվել է 68 ընկերությունների մասնակցությունը միջազգային 8 ցուցահանդեսներին,
- կազմակերպվել է Մոլդովայից 11 դիստրիբյուտորների այցը Հայաստան արտահանմանն օժանդակող կառույցների ներկայացուցիչների և դիստրիբյուտորների այցելություններ Հայաստան և (կամ) արտերկիր, գործարար կապերի հաստատում գործիքի ներքո,
- կազմակերպվել է ավելի քան 70 մասնագետների վերապատրաստման դասընթացներ ուսումնական դասընթացների մշակման, կազմակերպման և իրականացման ֆինանսավորում գործիքի շրջանակներում:

200 մլն դրամը գերազանցող ներդրումային ծրագրերի շրջանակներում ներմուծված սարքավորումների ԱԱՀ-ի վճարման ժամկետի հետաձգման նպատակով ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել 11 ներդրումային ծրագիր՝ 29.6 մլրդ ՀՀ դրամ ներդրումային ակնկալիքով:

«Ժամանակավոր ներմուծում» ռեժիմի շրջանակում հավանության են արժանացել 17 ընկերությունների թվով 18 ծրագրեր, հետաձգվել են 6.8 մլրդ ՀՀ դրամ մաքսային արժեքով ապրանքների մաքսային վճարներ:

Աշխատանքներ են իրականացվում ՀՀ կառավարության 14.11.2013թ. N1262-Ն որոշմամբ հաստատված կարգով արդյունաբերական նպատակներով օգտագործված քսայուղերի ակցիզային հարկի վերադարձման ուղղությամբ: Ներկա դրությամբ վերադարձվել են 3 ընկերությունների գումարները՝ մոտ 3.6 մլն ՀՀ դրամի չափով:

ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել ստեղծված աշխատատեղերի մասով Սարանիստ ընկերության շահութահարկից նվազեցում կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

ՀՀ կառավարության քննարկման փուլում է գտնվում «Եկամտային հարկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, համաձայն որի ֆիզիկական անձից թանկարժեք մետաղներ, անմշակ կաշի, անմշակ մոթի, խուզած բուրդ, ներառյալ՝ լվացված գեղմով բուրդ և փետուրով կաշի ձեռք բերելու դիմաց վճարված եկամուտներից եկամտային հարկը կհաշվարկվի 0 տոկոս դրույքաչափով:

«**Զբոսաշրջությանն աջակցության ծառայություններ**» 2014 **թվականի ծրագրի իրականացում**.

Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի հետ համագործակցության շրջանակում

- տպագրվել են Հայաստանը և հայկական զբոսաշրջային արդյունքը ներկայացնող անգլերեն լեզվով բրոշյուրներ և քարտեզներ,
- բարելավվել և թարմացվել է www.armeniainfo.am վեբ կայքը՝ այցելուներին տրամադրելով բազմաբովանդակ տեղեկատվություն օթևանատների, ռեստորանների, թանգարանների և այլ տեսարժան վայրերի վերաբերյալ,
- զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը պետական աջակցության շրջանակներում «Գեղարդի Հովտի Ագրոտուրիզմի Զարգացում» ՀԿ հետ համատեղ ապահովվել են Գառնիում գտնվող այցելուների տեղեկատվական կենտրոնի աշխատանքները:

Ապահովվել է ՀՀ մասնակցությունը թվով 9 միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին.

Ավանդական փոնակատարությունների մասով անցկացվել են հետևյալ փառատոները.

- «Մշակութային վերածնունդ» խորագրով «Գորգագործության և դեկորատիվ-կիրառական արվեստների» փառատոն, Դիլիջան
- «Օձունի գանձերը» ամենամյա փառատոն, Օձուն
- Սյունյաց ավանդույթներ՝ «ԹՈՒԹ» խորագրով փառատոն, Գորիս
- «Հայոց ավանդական տոնածիսական ուտեստների մրցույթ-փառատոն», Ախթալա
- «Գինու» ամենամյա փառատոն, ՀՀ Վայոց Ձորի մարզի հինգ համայնքներում
- «Արվեստների և արհեստների» ամենամյա փառատոն, Գյումրի:

Հոկտեմբերի 6-ին Երևանում նշվել է արդեն ավանդական դարձած Զբոսաշրջության միջազգային օրը: Զբոսաշրջության ոլորտում նշանակալի ավանդ ներդրած կազմակերպություններ և անձինք պարգևատրվել են ՀՀ վարչապետի և ՀՀ էկոնոմիկայի նախարարի շնորհակալագրերով, ինչպես նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Ոսկե մեդալով»:

Մարդկային ռեսուրսների զարգացման ուղղությամբ դեկտեմբերի 11-ին Երևանում «Հայ Զբոսավարների Գիլդիա» հասարակական կազմակերպության և Զբոսավարների ասոցիացիաների համաշխարհային ֆեդերացիայի (WFTGA) միջև ստորագրվել է «Երևանում Զբոսավարների միջազգային ուսումնական կենտրոնի հիմնման մասին» համաձայնագիրը: Երևանում դասընթացների մեկնարկով պաշտոնապես բացվել է զբոսավարների ուսումնական միջազգային երրորդ կենտրոնը:

ՀՀ Վայոց ձորի և Արագածոտնի մարզերում «Հայաստանի համայնքների հանրապետական ասոցիացիա» ՀԿ կողմից զբոսաշրջային տների (B&B) համակարգի ձևավորմանն ու զարգացմանը նպաստելու նպատակով շուրջ 60 մասնակիցների շրջանում կազմակերպվել են եռօրյա ուսուցողական սեմինարներ: Հյուրատներ կատարված անհատական այցերի ժամանակ ներկայացուցիչներին տրամադրվել է անհատական խորհրդատվություն զբոսաշրջության ոլորտի վերաբերյալ: Հյուրատների վերաբերյալ տվյալների հավաքագրման, վերլուծություն և կարիքների գնահատման արդյունքում սահմանված չափանիշներին համապատասխան առանձնացվել է 33 հյուրատուն, որոնց մասին տպագրվել է «Վայոց Ձոր և Արագածոտն մարզերի հյուրատների ցանկ» բուկլետը:

Հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման և պարբերական գնահատման գործընթացի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Ենթակառուցվածքների զարգացման և մատուցվող զբոսաշրջային ծառայությունների որակի բարձրացման նպատակով Երևանում գտնվող «Արարատ» և «Օլիմպիա» հյուրանոցներում իրականացվեց հյուրանոցների որակավորման և վկայականների երկարաձգման գործընթաց:
- ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում գտնվող «Մագնիտ» զբոսաշրջային տանը շնորհվել է «III կարգի զբոսաշրջային տուն» որակավորման կարգ,
- Երևանում գտնվող «Նոր Ձորաբերդ» հյուրանոցին շնորհվել է «2 աստղ» որակավորման կարգ:

Միջազգային համագործակցության շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Միջազգային համագործակցության շրջանակներում փետրվարի 20-21-ը Երևանում կայացավ Հայաստանի և Իրանի Իսլամական Հանրապետության միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության տեխնիկական հանձնաժողովի երկրորդ նիստը, որի ընթացքում քննարկվեցին երկու երկրների միջև զբոսաշրջային այցելությունների կայուն աճի ապահովման, տարածաշրջանային զբոսաշրջային միասնական արդյունքի ձևավորման և միջազգային շուկայում պատշաճ ներկայացման, զբոսաշրջության բնագավառում համագործակցության ամրապնդման նպատակով համապատասխան փաստաթղթի (փոխըմբռնման հուշագրի և երկամյա գործողությունների ծրագրի) ստորագրման հարցեր:

Նիստի շրջանակներում Հայաստանի հյուրանոցների ասոցիացիայի նախագահին է փոխանցվել ԻԻՀ հյուրանոցների ասոցիացիայի կողմից երկու երկրների հյուրանոցների ասոցիացիաների միջև համագործակցության մասին պայմանագրի նախագիծը՝ հետագայում քննարկելու և ստորագրման հնարավորությունները հստակեցնելու նպատակով:

Պետություն-մասնավոր համագործակցության շրջանակներում հունիսի 3-ին ՀՀ էկոնոմիկայի և ՀՀ արտաքին գործերի նախարարությունների, Լիբանանում Հայաստանի և Հայաստանում Լիբանանի դեսպանությունների աջակցությամբ և Հայաստանի ներգնա տուրօպերատորների միության հրավերով Հայաստան է այցելել Լիբանանի զբոսաշրջային օպերատորների միության պատվիրակությունը: Այցի նպատակը հայաստանյան գործընկերների հետ գործնական կապերի հաստատումն էր, համագործակցության հնարավորությունների քննարկումը, տեղում Հայաստանի զբոսաշրջային ներուժի վերաբերյալ պատկերացում կազմելը:

Ադրբեջանի կողմից ներկայացված հակաղարաբաղյան բանաձևի ընդունումը կանխելու ուղղությամբ 2014 թվականի հոկտեմբերի 1-4-ը Հայաստանի պատվիրակությունը Ուզբեկստանի Սամարղանդ քաղաքում մասնակցել է ՄԱԿ Զբոսաշրջության Համաշխարհային Կազմակերպության Գործադիր Խորհրդի 99-րդ նստաշրջանի աշխատանքներին: Օրակարգում ներառված բանաձևի նախագծի միջոցով փորձ է արվում արգելափակել ԼՂՀ մասնակցությունը զբոսաշրջային ցուցահանդեսներին և այլ միջոցառումներին՝ միաժամանակ սահմանափակելով կամ արգելելով նրանց ներկայացումը որպես զբոսաշրջավայր: Կատարված համատեղ աշխատանքի արդյունքում օրակարգից հանվել է ադրբեջանական կողմի նախագիծը: Հարցի քննարկումը փոխանցվել է ՄԱԿ ԶՀԿ Էթիկայի հանձնաժողովին:

Դեկտեմբերի 9-ին հաստատվել է «ՀՀ կառավարության և Վրաստանի կառավարության միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը:

Հայաստանը մասնակցել է Սևծովյան Տնտեսական Համագործակցության զբոսաշրջության նախարարների համաժողովին:

Ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության և Սերբիայի Հանրապետության առևտրի, զբոսաշրջության և հեռահաղորդակցության նախարարության միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիրը:

«Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայություններ» 2014 **թվականի ծրագրի իրականացման շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները**.

ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցությանն ուղղված օրենքը, որով ՏՏ ոլորտի նոր ստեղծվող, սկսնակ տնտեսավարող սուբյեկտներին կտրամադրվեն հարկային արտոնություններ, մասնավորապես շահութահարկի 0% դրույքաչափի և եկամտային հարկի 10% դրույքաչափի կիրառում: Արդյունքում, ակնկալվում է ոլորտի նոր ընկերությունների ձևավորում և աշխատատեղերի ստեղծում: Ընդունվել է նաև «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում համապատասխան լրացումը, որի համաձայն ինտերնետի տարանցիկ փոխադրման ծառայություններն ազատվում են ավելացված արժեքի հարկից:

Նախարարությունը ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) հետ համատեղ մշակել և ՀՀ կառավարություն է ներկայացրել ՀՀ-ում էլեկտրոնային առևտրի ոլորտի կարգավորմանն

ուղղված իրավական ակտերի նախագծերի փաթեթը: Միաժամանակ նախարարությունը ներկայումս համագործակցում է ԱՄՆ ՄԶԳ հետ՝ էլ. առևտրի ոլորտում առկա հարկային և մաքսային խնդիրների լուծման ուղղությամբ ևս իրավական կարգավորումներ ներկայացնելու նպատակով:

Հունիսի 20-21-ը «Արմենիա Մարիոթ» հյուրանոցային համալիրում կազմակերպվել է «Խելացի լուծումներ՝ խելացի բիզնեսի համար» խորագիրը կրող 7-րդ ամենամյա «Դիջիթեք» բիզնես ֆորումը, որին մասնակցել և իրենց տեխնոլոգիական լուծումներն են ներկայացրել 64 կազմակերպություններ՝ 51 տեղական և 13 արտասահմանյան

Սեպտեմբերի 26-ին Նյու Յորքի ՏԿՔ համաժողովների կենտրոնում, տեղի ունեցավ «Սովորել անցյալից, բացահայտել ապագան» խորագիրը կրող 7-րդ ամենամյա «ԱրմԹեք 2014» համաժողովը, որն ուղղված էր աջակցելու ՀՀ-ում տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտների շարունակական զարգացմանը՝ միաժամանակ խթանելով միջազգային գործարար կապերի ամրապնդումը և ներդրումների հետագա աճը: Համաժողովի պաշտոնական բացումն իրականացվեց ՀՀ Նախագահի կողմից: Համաժողովի ընթացքում ՀՀ կառավարության անունից ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «Մայքրոսոֆթ» ընկերության միջև ստորագրվեց հետագա համագործակցությանն ուղղված փոխըմբռնման հուշագիր: Համաժողովին ստորագրվեցին նաև երկու պայմանագրեր, որոնց համաձայն՝ «WiCastr» և «SoloLearn» ընկերությունները հայտարարեցին Հայաստանում գործող վենչուրային հիմնադրամում մասնակցության մասին:

Հոկտեմբերի 3-5-ը «Երևան Էքսպո» ցուցահանդեսային կենտրոնում տեղի է ունեցել միջազգային ամենամյա «ԴիջիԹեք Էքսպո 2014» տեղեկատվական, հեռահաղորդակցման և բարձր տեխնոլոգիաների ցուցահանդեսը, որի պաշտոնական բացմանը ներկա էր նաև ՀՀ Նախագահը: Ցուցահանդեսին մասնակցություն է ունեցել տեղական և արտասահմանյան ավելի քան 130 ընկերություն և շուրջ 30000 այցելու:

Դեկտեմբերի 4-ին «Արմենիա Մարիոթ» հյուրանոցում կայացավ «Գիտության և տեխնոլոգիաների ձեռներեցության ծրագրի (STEP) շրջանակում կազմակերպված վենչուրային համաժողովը, որը հնարավորություն ընձեռեց ծանոթանալու «Գաղափարից դեպի բիզնես» դրամաշնորհային մրցույթի 1-ին փուլի արդյունքում տեղեկատվական, հաղորդակցման և բարձր տեխնոլոգիաների, ճարտարագիտության, գյուղատնտեսություն, մաքուր տեխնոլոգիաների ոլորտների 65 ծրագրերից հաղթող ճանաչված 5 ծրագրեր արժանացան դրամական մրցանակների:

Դեկտեմբերին հայտարարվել է Նորարարության զարգացման համաֆինանսավորվող դրամաշնորհների 2-րդ մրցույթը, որի շրջանակում դրամաշնորհներ կտրամադրվեն նաև Գյումրիում և Վանաձորում իրականացվող նախագծերի համար:

Աշխատանքներ են իրականացվել ՀՀ-ում «ԱյԲիԷմ»-ի Նորարարական լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնի հիմնման ուղղությամբ: Ներկայումս կենտրոնը գործում է և տեղակայված է Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի տարածքում: Կենտրոնի կողմից կազմակերպվել են սեմինարներ և այլ միջոցառումներ: Ներկայումս ընթանում են կենտրոնի հիմնական տարածքի ինժեներական և ներքին ցանցերի նախագծման աշխատանքները, որոնց ավարտից հետո կհայտարարվի շինարարական կազմակերպության ընտրության մրցույթը:

Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի մոդելի հիման վրա աշխատանքներ են տարվել Վանաձորում համանման տեխնոլոգիական կենտրոնի հիմնման ուղղությամբ: Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնում ներկայումս իրականացվում են նախագծման աշխատանքներ: Վերջիններիս ավարտից հետո կհայտարարվի շինարարական կազմակերպության ընտրության մրցույթը:

Շարունակվում է Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի, Հայ-հնդկական ՏՀՏ գերազանցության կենտրոնի, «mLab ECA» մոբայլ լուծումների տարածաշրջանային լաբորատորիայի, Հայկական ազգային ճարտարագիտական լաբորատորիայի (ANEL) ծրագրերի իրականացումը և վերջիններիս շրջանակում որակյալ տեխնոլոգիական մասնագետների պատրաստումը և վերապատրաստումը:

Գործարկվել է Արցախի տեխնոլոգիական կենտրոնը:

Հայաստանի գյուղական բնակավայրերում ինտերնետի հասանելիության ապահովման նպատակով հեռավոր, սահմանամերձ, բարձր լեռնային, լեռնային, մինչև 1000 բնակիչ ունեցող շուրջ 344 գյուղական բնակավայրերում իրականացվել է անլար ինտերնետ սարքավորումների տեղադրման ծրագիրը:

Շարունակվել են բանակցությունները վերազգային ընկերությունների հետ համագործակցության ընդլայնման և համատեղ նոր ծրագրերի իրականացման ուղղությամբ: Հայաստանում հիմնվել է «Օրաքլ» ընկերության ներկայացուցչությունը: Ներկայումս աշխատանքներ են տարվում «Microsoft» ընկերության հետ հետագա համագործակցության ուղղությունները և ծրագրերը ներառող նոր հուշագրի նախագծի մշակման ուղղությամբ:

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽԹԱՆՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՍՏԱՎՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Արտահանման արդյունավետ շուկաներ մուտքի հնարավորությունների ընդլայնում.

Իրագործվել են Հայաստանի՝ Մաքսային միությանը և Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության Միասնական տնտեսական տարածքին միանալու Միջոցառումների ծրագրով («Ճանապարհային քարտեզով») մինչև ՀՀ անդամակցությունը նախատեսված 126 միջոցառումները: Շարունակական աշխատանքներ են տարվել Հայաստանի նորմատիվաիրավական դաշտը ԵԱՏՄ-ին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Համաձայնեցվել է ապրանքների և դրույքաչափերի ցանկը, որոնց նկատմամբ անցումային շրջանի ընթացքում ՀՀ հանդեպ կիրառվելու է Միասնական մաքսային սակագների դրույքաչափերից տարբերվող ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափեր:

ԵՄ կողմից «Շուկայական տնտեսության կարգավիճակ» ստանալու նպատակով նախապատրաստվել և եվրոպական կողմին է ներկայացվել համապատասխան չափանիշներին բավարարման վերաբերյալ ներկայացված հարցաշարի ամբողջական պատասխանը:

ԵՀ կողմից մեկնարկել է ԵՄ «Արտոնությունների ընդլայնված և համալրված համակարգ (GSP+)» արտոնյալ առևտրային ռեժիմի մոնիտորինգի առաջին փուլը, որի շրջանակներում պատրաստվել և եվրոպական կողմին է ներկայացվել ռեժիմից օգտվելու նախապայման հանդիսացող 27 միջազգային կոնվենցիաների ՀՀ-ում իրականացման ընթացիկ իրավիճակի վերաբերյալ համապարփակ զեկույց:

2014թ. ընթացքում բանակցվել և ստորագրվել են «Աջակցություն գյուղատնտեսության և գյուղի զարգացմանը» 2013թ. Բյուջետային աջակցության ֆինանսավորման համաձայնագիրը՝ 25 մլն եվրո արժեքով, Լրացում ԵՄ Բյուջետային աջակցության 2011թ. ֆինանսավորման համաձայնագրում՝ 21մլն եվրո արժեքով: Բանակցվել և ստորագրվել է ԵՄ տեխնիկական աջակցության 4 համաձայնագիր՝ ընդհանուր 21 մլն եվրո արժեքով, որոնք վերաբերում են տարածքային զարգացմանը, միջուկային ոլորտի համագործակցությանը, միգրացիայի և սահմանների կառավարմանն աջակցությանը և ԵՄ-Հայաստան համաձայնագրերի իրականացմանն աջակցելուն:

ԵՄ Բյուջետային աջակցության համատեղ կառավարման խորհրդի անդրանիկ նիստում ամփոփվել են ԵՄ բյուջետային աջակցության շրջանակներում իրականացված աշխատանքները և հստակեցվել են հետագա անելիքները:

Նոյեմբերի 3-ից 6-ը ՀՀ էկոնոմիկայի նախարարի Բրյուսել կատարած այցի շրջանակներում ստորագրվել է ԵՄ կողմից 2014-2017թթ. Հայաստանին տրամադրվելիք աջակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագիր, որի համաձայն ԵՄ-ն նախատեսում է վերոնշյալ տարիների համար ՀՀ-ին տրամադրել 140-170 մլն եվրոյի աջակցություն:

Հունիսի 25-ից 27-ը ՀՀ էկոնոմիկայի նախարար Կ. Ճշմարիտյանի գլխավորած պատվիրակության Բրյուսել այցի շրջանակներում եվրոպական կողմի հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց կողմերի միջև քննարկումներ սկսել ՀՀ-ԵՄ ապագա համագործակցության ձևաչափի և հետագա հարաբերությունների իրավական շրջանակի վերաբերյալ, ինչը դարձավ հետագա մի շարք

հանդիպումների օրակարգ: Մասնավորապես, նոյեմբերի 4-5-ին Բրյուսելում տեղի ունեցան ԵՄ-Հայաստան հարաբերությունների շրջանակում առևտրատնտեսական հետագա համագործակցության վերաբերյալ մտքերի փոխանակումը, ՀՀ-ԵՄ առևտրի, տնտեսական և համապատասխան իրավական հարցերով ենթակոմիտեի հերթական՝ 13-րդ նիստը: Առևտրի բնագավառում ապագա համագործակցության ձևաչափը ձևավորելու նպատակով ուսումնասիրվել և դիրքորոշում է ներկայացվել տարբեր ոլորտներում երկկողմ համագործակցության շրջանակներին առնչվող ԵՄ առաջարկի վերաբերյալ: Այն քննարկվել է ենթակոմիտեի նիստի և դեկտեմբերի 17-ին կայացած տեսակոնֆերանսի ընթացքում:

Ավարտվել է 6, մեկնարկել 2, պայմանագրի մշակման փուլում է 1-ը, մեկնարկի նախապատրաստական փուլում է 4 Թվինինգ ծրագրեր: Թայեքս ծրագրերի մասով ստացվել է 20 հայտ, իրականացվել են 6 միջոցառումներ: Մեկնարկել են 2 Սիգմա ծրագրեր:

ԱՀԿ քարտուղարությանը ծանուցվել է 2015թ. հունվարի 1-ից սկսած եռամյա ժամանակահատվածում մաքսային սակագների մասով ՀՀ ստանձնած պարտավորությունների փոփոխման վերաբերյալ բանակցությունների իրավունքի վերապահման մասին:

ԵՏՀ հետ ընթացել են խորհրդակցություններ՝ ԱՀԿ շրջանակներում բանակցային գործընթացի վերաբերյալ դիրեկտիվների մշակման ուղղությամբ: Ձևավորվել է բանակցային պատվիրակությունը:

Անց է կացվել միջկառավարական հանձնաժողովների 3 նիստ, իրականացվել են 80 երկկողմ և 17 բազմակողմ համաձայնագրերի կնքման, փորձաքննության և վավերացման ուղղությամբ համապատասխան աշխատանքներ:

Արտահանմանն աջակցող ինստիտուցիոնալ դաշտի կատարելագործում.

ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի նիստում ընդունվել է «Արդյունաբերության զարգացման և Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամները միաձուլման ձևով վերակազմակերպելու և Հայաստանի զարգացման հիմնադրամ ստեղծելու, «Զարգացման հայկական գործակալություն» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» ՀՀ կառավարության որոշումը: Վերջինս հնարավորություն կտա բարելավել ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացման և վերջինիս համար նախատեսված ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, խորացնել պետություն-մասնավոր հատվածի համագործակցությունը, խթանել օտարերկրյա ներդրումները, արտահանումը և զբոսաշրջությունը:

2014թ. դեկտեմբերի 17-ին ՀՀ ազգային ժողովի կողմից վավերացվել է ՀՀ և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև ստորագրված «Առևտրի խթանում և որակի ենթակառուցվածքներ» վարկային համաձայնագիրը: Ծրագրի իրականացման մեկնարկը նախատեսվում է 2015 թվականից:

ՀՀ կառավարություն են ներկայացվել «Եվրասիական տնտեսական միության (Մաքսային միության) սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) ներառման, միասնական ռեեստրի ձևավորման ու վարման կարգի, ինչպես նաև տրված համապատասխանության սերտիֆիկատների և գրանցված համապատասխանության հայտարարագրերի միասնական ռեեստրի ձևավորման ու վարման կարգի մասին», «ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության հայտարարագրերի գրանցման կարգի մասին» և «Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերին համապատասխանության սերտիֆիկատի և համապատասխանության հայտարարագրի միասնական ձևերը և դրանց ձևակերպման կանոնները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերը:

ԵԱՏՄ-ի շրջանակներում իրավական կարգավորումների և պայմանների վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտներին խորհրդատվական և տեղեկատվական աջակցություն.

ԵԱՏՄ-ն անդամակցությունից հետո մի շարք ապրանքների նկատմամբ ՀՀ-ի կողմից պաշտպանիչ միջոցների կիրառման ընթացակարգերի պարզաբանման նպատակով Նախարարության և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից Մոսկվայում կազմակերպվել էր խորհրդակցություն, որին մասնակցել են պաշտպանիչ միջոցների տակ ընկնող ապրանքներ հայկական ներմուծողները և Մաքսային միության արտադրողները: Խորհրդակցության ժամանակ քննարկվել են պաշտպանիչ նշված ցանկում ընդգրկված առավել զգայուն ապրանքների մասով անհրաժեշտ միջոցառումները, որոնք թույլ կտան նվազեցնել հայկական շուկայի վրա նշված ապրանքների հանդեպ սակագնային սահմանափակումների կիրառման ազդեցությունը:

Նոյեմբերի 26–ին Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միությունում կայացավ ՀՀ էկոնոմիկայի նախարարության և Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության համատեղ կլոր սեղան քննարկումը՝ նվիրված «Եվրասիական տնտեսական միության երկրներ–Հայաստան արտահանման հարցերին:

Դեկտեմբերի 5-ին ՀՀ կառավարության և Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության համատեղ ջանքերով ՀՀ կառավարության նիստերի մեծ դահլիճում կայացել է Հայաստանի՝ ԵԱՏՄ-ին անդամակցության հարցերով աշխատաժողովը, որին մասնակցել է ՀՀ էկոնոմիկայի նախարար Կարեն Ճշմարիտյանը, նախարարության իրավասության ոլորտային աշխատանքային խմբերի ղեկավարները: Գործարարներին հնարավորություն է ընձեռվել հնչեցնելու ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցությունից հետո իրենց գործունեությանն առնչվող հարցերը, որոնց վերաբերյալ համապատասխան մասնագետները տվել են պատասխաններ և պարզաբանումներ:

Դեկտեմբերի 25-ին Նախարարությունում կայացել է ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցության հարցերին նվիրված հերթական աշխատաժողովը, որին մասնակցել են ՀՀ էկոնոմիկայի, ֆինանսների նախարարությունների, ՀՀ սննդամթերքի անվտանգության ծառայության՝ ԵԱՏՄ-ին Հայաստանի միանալու ուղղությամբ աշխատանքների կազմակերպման ոլորտային աշխատանքային խմբերի պատասխանատուները, հասարակական կազմակերպությունների ղեկավարներ և աշխատակիցներ, Հայաստանի գործարար համայնքի շուրջ 70 ներկայացուցիչներ:

ԳՈՐԾԱՐԱՐ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՎ ՓՄՁ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների 2014թ ծրագրի իրագործման շրջանակներում նախարարության կողմից համակարգվել են հետևյալ աշխատանքները.

Ներդրվել և գործում է հարկ վճարողի այլ պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձի համար դիմումի ներկայացման առցանց համակարգ:

Հարկային համակարգում գործող 9 հարկ վճարողների սպասարկման կենտրոնների կողմից անցկացվել են 38 դասընթացներ, որոնց մասնակցել է 2025 ունկնդիր, «ՀՀ ֆինանսների նախարարության ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվել են 24 ուսումնական դասընթացներ, որոնց մասնակցել է 402 ունկնդիր:

Թղթային եղանակով շրջանառվող փաստաթղթերի թվի և դրանց պատրաստման ժամանակի կրճատման նպատակով մարտի 28-ին ներդրվել է հաշվարկային փաստաթղթեր ենթահամակարգը:

Մաքսային ձևակերպումներ իրականացնելու համար որակավորման պարտադիր պահանջը վերացնելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «ՀՀ մաքսային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի և «ՀՀ կառավարության 2003 թվականի նոյեմբերի 21-ի N 1779-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերը:

Մայիսի 20-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «ՀՀ մաքսային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը

Գույքահարկի և հողի հարկի համար մեկ միասնական հարկատեսակ սահմանելու նպատակով մշակվել է «Անշարժ գույքի հարկի մասին», «Փոխադրամիջոցների գույքահարկի մասին» և հարակից օրենքներում համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ նախատեսող ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը, որը սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ Ազգային Ժողովի քննարկմանը

Օտարերկրյա ներդրումների խթանման նպատակով գործարկվել է E-register.am կայքի անգլերեն տարբերակը:

Մշակվել է սնանկության գործընթացների քարտեզագրումը և կարծիքի է ներկայացվել «Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» ինքնակարգավորվող կազմակերպություն:

«Մեկ պատուհան» սկզբունքով ծառայությունների մատուցման համակարգից օգտվողների համար բարենպաստ պայմաններ ապահովելու, շինարարական թույլտվությունների տրամադրման գործընթացը բարելավելու նպատակով Երևանի քաղաքապետարանում տեղադրվել և գործարկվում է հերթի կառավարման էլեկտրոնային համակարգ:

ՀՀ քաղաքաշինության նախարարության պատվերով և ՀՀ քաղաքաշինության նախարարի հրամանով հաստատվել և կիրառման է ընդունվել փոքր և միջին ձեռնարկությունների ենթակառուցվածքի օբյեկտների բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի կատալոգը՝ նշված օբյեկտների սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած աշխատանքային նախագծերով, ինչպես նաև դրանց շինարարական գործունեության իրականացման ընթացքի վերաբերյալ գործնական խորհրդատվական ձեռնարկը՝ տեքստային և պատկերային նկարագրությամբ: Նշված նախագծերի, կատալոգի և ձեռնարկի էլեկտրոնային տարբերակները և տպագիր օրինակները տրամադրվել են ՀՀ մարզպետարաններին, Երևանի քաղաքապետարանին և այլ շահագրգիռ մարմինների՝ դրանց ներդրման և հետագա կիրառման նպատակով, ինչպես նաև կատալոգի և ձեռնարկի էլեկտրոնային տարբերակները տեղադրվել են ՀՀ քաղաքաշինության նախարարության կայքում (www.mud.am):

Հարկ վճարողներին առավել պահանջված հարկային և մաքսային մարմինների սպասարկման ծառայությունները հասանելի դարձնելու նպատակով գործարկվել են հարկ վճարողների սպասարկման 40 կետեր, որոնցից անհրաժեշտ անձնակազմով համալրված են 35-ը:

Հարկ վճարողների համար դրամարկղային գրքերն էլեկտրոնային եղանակով վարելու հնարավորության ապահովման նպատակով «Դրամարկղային գործառնությունների մասին ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 29.09.2014թ. ՀՀ ԱԺ-ի կողմից առաջին ընթերցմամբ:

Մաքսային ձևակերպման ավտոմատացված համակարգի տվյալների շտեմարանում առկա տեղեկատվության համադրման, ՀՀ ՖՆ ստորաբաժանումներից և այլ պետական մարմիններից ստացված տեղեկատվության վերլուծության հիման վրա՝ կապված ռիսկերի վերլուծության և կառավարման գործընթացի հետ և հայտնաբերված շեղումների հիման վրա տեղայնացվել են համապատասխան «թիրախային բնույթ» կրող ռիսկի պրոֆիլներ:

Փաստաթղթերի պատրաստման և մաքսային ձևակերպման համար պահանջվող ժամանակահատվածի կրճատման նպատակով իրականացվել է ԱՏԳ ԱԱ հայերենով թարգմանություն և հրապարակվել է մաքսային մարմնի պաշտոնական կայքի «օգտակար հղումներ» բաժնում:

Շինարարության թույլտվությունների տրամադրման պարզ և հստակ համակարգի սահմանման նպատակով ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից ՀՀ կառավարության քննարկմանն են ներկայացվել «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման թույլտվությունների տրամադրման կարգը սահմանելու մասին» և «Հայաստանի Հանրապետության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերը:

Դատական համակարգի արդյունավետության բարձրացման, դատարանների կողմից մատուցված ծառայությունների բարելավման նպատակով ՀՀ դատավորների խորհրդի որոշմամբ հաստատվել են դատական գործի վիճակագրական դասակարգիչները, որոնց հիման վրա դատական դեպարտամենտի կողմից վարվող վիճակագրությունն արդեն իսկ հայերեն լեզվով տեղադրվում է Հայաստանի դատական համակարգի ինտերնետային կայք էջում (www.court.am):

Առևտրային վեճերի դատական լուծման և կիրարկման վրա ծախսվող ժամանակի և ընթացակարգերի կրճատման նպատակով իրականացվել է դատական գործընթացների, մասնավորապես, առևտրային, հողային, աշխատանքային, տնտեսական հանցագործությունների հետ կապված, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ վեճերին առնչվող քարտեզագրում:

«Գործարարությամբ զբաղվելը 2015» զեկույցի տվյալներով Հայաստանը 189 երկրների շարքում զբաղեցնում է 45-րդ տեղը՝ բարելավելով իր դիրքը 4 տեղով:

Տեսչական բարեփոխումների իրականացում

ՀՀ կառավարության սեպտեմբերի 25-ի նիստում հավանության է արժանացել «Հայաստանում տեսչական համակարգի օպտիմալացման հայեցակարգին և գործողությունների համառոտ ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշումը:

Դեկտեմբերի 17-ին ՀՀ ԱԺ-ի կողմից երրորդ ընթերցմամբ ընդունվել է «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքների նախագծի փաթեթը:

Հանդիպումներ են կազմակերպվել ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության, ՀՀ ԷՆ շուկայի վերահսկողության և ՀՀ ԱՆ առողջապահական պետական տեսչությունների հետ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունների կիրարկումն ապահովելու և ստուգաթերթի հետ կապված հարցերի պարզաբանման նպատակով, ինչպես նաև տարբեր ոլորտներում գործունեություն ծավալող տնտեսավարողների հետ՝ ստուգման գործընթացի հետ կապված առկա խնդիրների վերհանման և լուծման նպատակով:

Աշխատանքներ են տարվել ՀՀ ԿԳՆ Լեզվի պետական տեսչությունում ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի ներդրման ուղղությամբ:

Շահագրգիռ կողմերի հետ քննարկվել և լրամշակվել է «Ստուգումների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, աշխատանքներ են տարվել մի շարք ոլորտային օրենքների ուղղությամբ:

Ներդրումների ներգրավման հնարավորությունների ընդլայնում

Մշակվել և ՀՀ կառավարություն են ներկայացվել «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքի և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերի նախագծերը:

Ստեղծվել է «Մերիդիան» ոսկերչական, ակնագործական և ժամագործական ազատ տնտեսական գոտին:

«Ալյանս» ազատ տնտեսական գոտու շահագործողի թույլտվություն են ստացել «ԷՌԱ ՊՊ» ՍՊԸ-ն՝ լուսադիոդային սարքերի արտադրության ոլորտում, «ՖԱՐՄԱՏԵՔ» ՓԲԸ-ն՝ դեղագործության ոլորտում, «ԼԻՖՏՏԵԽՆԻԿ» ՍՊԸ-ն՝ վերելակների նախագծման և արտադրության ոլորտում:

Ստեղծվել է ՀՀ-ում ներկայումս իրականացվող ներդրումային ծրագրերի նախնական շտեմարան: Շարունակվում են հավաքագրվել ՀՀ-ում ներկայումս իրականացվող ներդրումային ծրագրերը ամբողջական շտեմարան ձևավորելու նպատակով: Մոտ 60 ներդրումային ծրագրեր և առաջարկներ ՀՀ ԱԳՆ միջոցով փոխանցվել են ՀՀ արտասահմանյան դիվանագիտական ներկայացուցչություններին և ներկայացվել են օտարերկրյա ներդրողներին:

Նոյեմբերի 25-ին Փարիզում Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Եվրասիական շաբաթ 2014-ի շրջանակներում տեղի է ունեցել գործարար համաժողով՝ «Բիզնես հնարավորություններ Եվրասիական տարածաշրջանում» խորագրով: ՀՀ էկոնոմիկայի նախարարը

հանդես է եկել ելույթով՝ ծանոթացնելով համաժողովի մասնակիցներին Հայաստանի տնտեսական քաղաքականության հիմնական ուղղություններին, մեր երկրի ներդրումային միջավայրին և գործարար հնարավորություններին:

ՏՀԶԿ հետ համատեղ իրականացրած աշխատանքների արդյունքում ներկայացվել է մրցունակության բարեփոխումների փորձագիտական գնահատման (peer review) Հայաստանի զեկույցը «Անդրազգային ընկերությունների ներգրավում և Հայաստանի ՓՄՁ-ների միջև կապերի ստեղծում շինարարական նյութերի ոլորտում» և «Հայաստանի ՓՄՁ-ները համաշխարհային արժեքի շղթային կապակցելը. անդրադարձ ագրոբիզնեսին» ոլորտներում:

Համաշխարհային բանկի անդամ Միջազգային ֆինանսական կորպորացիայի հետ համատեղ սկսվել է Հայաստանում ներդրումային միջավայրի բարեփոխումների ծրագրի (2014-2017թթ.) իրականացումը, որի շրջանակներում մշակվել են Ներդրումային ճանապարհային քարտեզը և ՀՀ-ից ձկնամթերքի և ագրոբիզնեսի արտահանման շղթայի քարտեզագրման շրջանակը:

Համակարգվել է «Միլան Էքսպո-2015» համաշխարհային ցուցահանդեսին Հայաստանի Հանրապետության պաշտոնական մասնակցության նախապատրաստումը:

Մշակվել է օտարերկրյա հանրահայտ ընկերությունների, վերազգային կորպորացիաների թիրախային ցանկ և աշխատանքի ժամանակացույց, որոնց համաձայն աշխատանքներ են տարվում համապատասխան ընկերությունների հետ: Իրականացվել են ուսումնասիրություններ և մշակվել են ոլորտային ներդրումային քարտեզներ և ծրագրեր:

ԱՄՆ ՄԶԳ Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության ծրագրի հետ համատեղ մշակվել և հրապարակվել են Դեղագործության և Սննդի վերամշակման ներդրումային ուղեցույցներ:

Աշխատանքներ են տարվում Համահայկական ներդրումային հիմնադրամի ստեղծման ուղղությամբ:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության նախաձեռնությամբ ԱԶԲ Երկրի գործառնությունների գործարար ծրագրում ընդգրկվել են «Միջազգային ներդրումային ֆորում. Հայաստան» և «Արդյունաբերության զարգացման աջակցություն» տեխնիկական աջակցության ծրագրերը: Միջազգային ներդրումային ֆորումի իրականացման հետ կապված աշխատանքները ընթացքի մեջ են:

ՓՄՁ պետական աջակցության 2014 թվականի ծրագրի իրականացում

Ֆինանսական (վարկային) և տեխնիկական աջակցության ուղղություններով 2014թ. ընթացքում 6200 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտի ցուցաբերվել է 14688 աջակցություն, որի շուրջ 90%-ը ՀՀ մարզերում, առավելապես հեռավոր և սահմանամերձ գյուղական և քաղաքային համայնքներում: Մասնավորապես՝

- 13064 տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն,
- 500 ուսուցողական աջակցություն,
- 436 սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն
- 235 վարկային երաշխավորությունների տրամադրում
- 154 Ձեռնարկությունների եվրոպական ցանցի հաղորդակցման կենտրոնի գործունեության շրջանակներում աջակցություն
- 181 ոլորտային աջակցություն
- 18 ոլորտային աջակցության ծրագրի շրջանակներում դրամաշնորհների տրամադրում

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Քաղաքացիական ավիացիայի ոլորտում ինստիտուցիոնալ նոր կարգավորման ամրագրում

Ավիացիայի ոլորտի նկատմամբ պետական վերահսկողության նոր ինստիտուցիոնալ կառուցվածք սահմանելու նպատակով ՀՀ կառավարության որոշումներով Նախարարության կանոնադրությամբ

ամրագրվել են համապատասխան գործառույթներ ու իրավասություններ,ինչպես նաև հստակեցվել են բնագավառում ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության լիազորությունները:

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի N 1022-Ն որոշմամբ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը դեկտեմբերի 8-ին ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացրել «Ավիափոխադրողի մասնագրի, կանոնավոր և ոչ կանոնավոր օդային փոխադրումների իրականացման, օդային ուղու շահագործման թույլտվությունների ստացման համար ներկայացված հայտերի քննարկման հետ կապված հարցերով խորհուրդ ստեղծելու, դրա աշխատակարգը և անհատական կազմը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ սահմանելով վերոնշյալ թույլտվությունների տրամադրման համար գնահատման չափանիշներ:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել և այժմ քննարկման փուլում է «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը:

Ստորագրվել են «Ավիափոխադրողի մասնագրի նկատմամբ ներկայացվող պահանջների ու դրա տալու կարգը սահմանելու մասին», «ՀՀ-ում օդային ուղիների շահագործման թույլտվությունների տրման պահանջների և պայմանների կանոնակարգը հաստատելու մասին», «Օտարերկրյա օդանավ շահագործողների կողմից ՀՀ կանոնավոր և ոչ կանոնավոր օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվությունների տրման կանոնակարգը հաստատելու մասին», «Օդանավ շահագործողի վկայականի նկատմամբ ներկայացվող պահանջների ու դրա տալու կարգը սահմանելու մասին» ՀՀ էկոնոմիկայի նախարարարի և ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի համատեղ հրամանները:

Քաղաքացիական ավիացիայի բնագավառում միջազգային իրավապայմանագրային հարաբերությունների վերանայում

Նոյեմբերի 16-23-ը Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ICAO) հովանու ներքո Ինդոնեզիայում կայացած Օդային հաղորդակցությունների շուրջ բանակցությունների կոնֆերանսի շրջանակներում ՀՀ պատվիրակությունը բանակցություններ է վարել 13 պետության և ԵՄ Հանձնաժողովի պատվիրակության հետ: 11 գործընկեր պետության (Կատարի Պետություն, Լեհաստանի Հանրապետություն, Իսլանդիայի Հանրապետություն, Նիդերլանդների Թագավորություն, Քուվեյթի Պետություն, Շվեյցարիայի Համադաշնություն, Նորվեգիայի Թագավորություն, Հունաստանի Հանրապետություն, Հորդանանի Հաշիմյան Թագավորություն, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Թագավորություն, Թաիլանդի Թագավորություն) հետ ավիացիոն իշխանությունների միջև համաձայնությամբ հնարավորինս (կախված գործընկեր պետության որդեգրած ավիացիոն քաղաքականությունից) վերացվել են տարողության, ուղղությունների և հաճախականությունների սահմանափակումները և ձեռք են բերվել պայմանավորվածություններ միջկառավարական համաձայնագրերի վերանայման շուրջ՝ դրանցում առկա սահմանափակումների վերացման նպատակով:

Սինգապուրի Հանրապետության և Ավստրալիայի Միության ավիացիոն իշխանությունների հետ հանդիպման արդյունքում քննարկվել է օդային հաղորդակցությունների հաստատման հնարավորությունը:

Եվրոպական Միության հետ Ընդհանուր ավիացիոն գոտու մասին համաձայնագրի կնքումը քննարկման փուլում է, 2015 թվականի փետրվարի 6-ին նախատեսվում ԵՀ Շարժունակության և Տրանսպորտի հարցերով գլխավոր տնօրինության փաստահավաք առաքելության այցը ՀՀ:

ԻՆՈՎԱՑԻՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽԹԱՆՈՒՄ

Հայաստանում ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության հայեցակարգով նախատեսված համակարգաստեղծ նախաձեռնությունների իրականացմանն աջակցություն.

Հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 1-ը Դիլիջանի «Բեսթ Վեսթերն Փարադայզ» հյուրանոցային համալիրում ՀՀ վարչապետի մասնակցությամբ տեղի է ունեցել Բիզնես ինովացիոն ֆորումը, որը կարևոր հարթակ հանդիսացավ Հայաստանում ինովացիոն զարգացման մարտահրավերների, տեխնոլոգիական ոլորտում կրթության և աշխատուժի, ինչպես նաև տեխնոլոգիական ձեռներեցության հիմնախնդիրների բացահայտման և դրանց հաղթահարման ուղիների քննարկման համար:

Գյումրու տեխնոլոգիական կենտրոն

Գործարկվել է Գյումրու տեխնոլոգիական կենտրոնը, և կենտրոնի հիմնանորոգված շենք են տեղափոխվել ժամանակավոր (վարձակալված) տարածքում գործող լաբորատորիաները և մի շարք տեղական ու միջազգային ընկերությունները: Սեպտեմբերի 13-ին ՀՀ Նախագահի մասնակցությամբ տեղի է ունեցել կենտրոնի պաշտոնական բացումը: Կենտրոնում ներկայումս տեղակայված են «Դ-Լինկ», «Դիջիթալ Փոմըգրանեթ», «ՋիԷնՍի-Ալֆա», «Ի-Վորքս», «Skyline ստուդիա», «Թայմ Փրոդաքշընն», Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն, «Գյումրու լեզուների տուն» կազմակերպությունները:

ԳՏԿ-ում հունիսի կեսից կազմակերպվել է ամառային դպրոց, որի ընթացքում դասավանդվել են «Ցանցային հիմունքներ», «Ծրագրավորման հիմունքներ», «Անգլերեն» առարկաները: Ամառային դպրոցի դասընթացներին մասնակցել են ավագ դպրոցների և վարժարանների թվով 95 աշակերտներ:

ԳՏԿ-ն նախաձեռնել է «Start-up ակումբը», որի նպատակն է զարգացնել ձեռներեցությունը երիտասարդների շրջանում:

Գյումրու տեխնոլոգիական կենտրոնում կազմակերպվել են մասնագիտական դասընթացներ, որոնց մասնակցել են 810 ուսանողներ և մասնագետներ: Բիզնես աջակցության ու խորհրդատվություն է տրամադրվել 176 ընկերությունների և թիմերի:

ԳՏԿ-ում իրականացվել են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝

- Գյումրիում առաջին միջազգային խոշոր տեխնոլոգիական “iGyumri” համաժողովը: Համաժողովին մասնակցել է պետական, մասնավոր, գիտակրթական և այլ ոլորտների շուրջ 400 ներկայացուցիչ Հայաստանից ու արտերկրից:
- Կազմակերպվել են «Ինովացիոն ծրագրեր և Startup բիզնեսներ», «Quick Start», «Քո IT ընկերությունը Հայաստանում», «Կերպարների մշակում, ZBrush-3dmax էքսպորտ», «Low poly modeling 3D Max,Կերպարների մշակում, Z-BRUSH-ից 3D MAX ինպորտ և հակառակը», «Ձեռնարկատիրական գործունեությունը ՀՀ-ում», «Ձեռներեցության հիմունքներ» և «Գյումրի քաղաքի զարգացման ծրագիր» խորագրերով սեմինարներ:

Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոն

Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի (ՀԱՄՀ) հետ համագործակցության շրջանակում՝

Լուվենի կաթոլիկ համալսարանի (Բելգիա) հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոնում արտադրվելիք FDG [18F] իզոտոպը համալսարանի բժշկական դպրոցի նեյրոֆիզիոլոգիական լաբորատորիայի փորձերում օգտագործելու՝ Ա.Ի.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի մասնագետների ներգրավմամբ, ինչպես նաև բժշկական անձնակազմի հատուկ ուսուցման, վերապատրաստման և պարբերական որակավորման բարձրացման վերաբերյալ:

ՀԱՄՀ առողջապահական գրասենյակի ղեկավարը մասնակցել է 2014թ. սեպտեմբերի 1-ից 5-ը Երևանում անցկացված Ատոմային էներգիայի միջազգային գործակալության «Ճառագայթային հետևանքների վերլուծությունը» թեմայով տարածաշրջանային աշխատանքային հանդիպմանը:

Կազմակերպվել է «Ցիկլոտրոն ծրագրի վերաբերյալ» պայմանագրի ֆինանսավորման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության (Վարկառու) և «KBC NV» բանկի (Վարկատու) միջև 2010թ. նոյեմբերի 23-ին կնքված Վարկային համաձայնագրի վերջնաժամկետի երկարացումը: Վերոնշյալ վարկային համաձայնագրով սահմանված փոխհատուցման վճարները կիրականացվեն «Պետական աջակցություն Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կանոնադրական խնդիրների իրականացմանը» 2014թ. ծրագրով նախատեսված բյուջեի հաշվին:

ՀԱՄՀ առողջապահական գրասենյակի ղեկավարն այցելել է ՌԴ առողջապահության նախարարության Բժշկական ռադիոլոգիական հետազոտությունների կենտրոն (ք.Օբնինսկ): Պայմանավորվածություններ են ձերք բերվել Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոնի բժշկական անձնակազմին գիտելիքների, փորձի և հմտությունների փոխանցման, հատուկ ուսուցման, վերապատրաստման և որակավորման բարձրացման վերաբերյալ:

Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոնի շինարարության աշխատանքները հաջողությամբ շարունակվում են: ՀԱՄՀ առողջապահական գրասենյակի հրավերով հոկտեմբեր-նոյեմբերին Հայաստան են ժամանել բելգիական «Այբն Բիմ Էփլիքեյշնս» (IBA) ընկերության ներկայացուցիչները՝ Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոնի ստեղծման աշխատանքների ընթացքին ծանոթանալու նպատակով:

Նոյեմբերին կազմակերպվել է ՀՀ ԿԱ Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի ճառագայթային անվտանգության վարչության աշխատակիցների հերթական այցը Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոնի շինարարական հրապարակ՝ Philips ընկերության մասնագետների հետ շինարարական հրապարակի փորձագիտական դիտարկման և ընկերության կողմից պոզիտրոն էմիսիոն և միաֆոտոն էմիսիոն համակարգչային տոմոգրաֆիայի ախտորոշիչ սարքավորումների տեղայնացման համար մշակված համապատասխան տեխնիկական պայմանների քննարկման նպատակով:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության և IBA ընկերության միջև 2010թ. նոյեմբերի 23-ին կնքված «Ցիկլոտրոն ծրագրի վերաբերյալ» պայմանագրի շրջանակում մատակարարվող SPECT-CT համակցված համակարգը դեկտեմբերի 9-ին բերվել է Հայաստան, մաքսազերծվել է և գտնվում է «Ապավեն Տերմինալ» ՓԲԸ տարածքում:

Ինովացիոն ոլորտում միջազգային համագործակցության ակտիվացմանն աջակցություն

Մինչև 2020թ. ԱՊՀ մասնակից երկրների ինովացիոն ոլորտում համագործակցության միջպետական ծրագրի (Ծրագիր) շրջանակում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ում ձևավորել է Ազգային կոնտակտային կենտրոն, որը կիրականացնի ինովացիոն նախագծերի և ձեռներեցությանն աջակցման, ինչպես նաև միջպետական ծրագրերի համակարգման գործառույթներ,
- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալը սեպտեմբերի 29-30-ը ք.Մինսկում մասնակցել է ԱՊՀ երկրների Գիտատեխնիկական և ինովացիոն ոլորտներում համագործակցության միջպետական խորհրդի 13-րդ նիստին:
- Դեկտեմբերի 12-13-ը ք.Մոսկվայում մասնակցել է Գիտատեխնիկական և ինովացիոն ոլորտներում համագործակցության միջպետական խորհրդի 14-րդ նիստը: Քննարկվել են Ծրագրի իրականացման 2015-16թթ. միջոցառումների նախագիծը և Ծրագրի շրջանակում երիտասարդական քաղաքականության հարցեր: